

Q-43



ԿԱՔԱԿԱԶՈՐ

891.995

Q-43

Q-43

891.995

Q-48

ԱՂԱՎՆԻ

30 MAY 2011

30 MAY 2011

ԿԱՔԱՎԱԶՈՐ

(Մանկական պոեմ)

Եկար Հ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ

ՊԵՏՇՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ԾԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1987

- 5 FEB 2013

6596



1645

38

Մեր գյուղն հեռու լեռներում,
Ալագյազի լանջի մոտ,
Զրեք ունի վարարուն,
Կանաչ արտեր և արոտ:

Ունի մաքուր, անուշ ող,
Հազար գույնի ծաղիկներ,
Յերկինք ունի արևոտ,
Ու լեռնային գով հովիտ:

Այդ լեռներում բուրավետ,
Արոտներում ծաղկաշատ
Ապրում եյինք իրար հետ
Յես ու Աթոն գառնարած:

Յե՛վ ամեն որ մութ լուսին
Մենք վոտաբաց, ցրտահար
Տանում եյինք միասին՝
Մեր գառները զեպի սար:

Ցնցոտի յեր մեր հազին,
Ու յերկուսիս մի կուլաբ,*)

*) Կուլաբ—հովվի թաղիքե թիկնոց:

Բայց ուլի պես անհանգիստ
Ու չար եյինք մենք անչափ:

Թեև մեզնից անհանգիստ
Ուլեր կային մեր հոտում,
Վոր չտալով մեզ հանգիստ
Ցրվում եյին արոտում:

Յե՛վ ուլիկի պես թեթև
Իմ ընկերը մտերիմ



Վազ եր տալիս հե՛վինե՛վ
Ու հավաքում ուլերին:

Յեա ել զինձած մահակով
Թռչում եյի քարից քար,
Այսպես մինչև յերեկո
Հանգիստ չկար մեզ համար:

Գառնատեղից քիչ հեռու
Կար մամռապատ մի քարայր,
Կողքին լեռան ջինջ առու,
Վայրի թփեր ու մացառ:

Պատմել եյին մեզ մի որ,
Վոր քարայրում այդ խավար
Ապրել է մի ճգնավոր
Ու աղոթել անդադար:

Լաց է յեղել դառնագին
Յե՛վ որ-որի դալկացել,
Մինչև արցունքն իր աչքի
Վճիտ առվակ է դարձել:

Ու քարայրից դեպ ներքև
Կարկաչել է այդ առուն,
Կարկաչել է ու յերգել
Զանգակի պես զրնգուն:

Իսկ բուրավետ խոտի մեջ,
Թփուտներում ցողաթավ.
Բուն ե դրել, ձագ հանել
Նախշուն փետուր մի կաքավ:


Յերբ մեռել ե քարայրում
Ծերունին այդ մենավոր,
Յեվ արցունքի ջինջ առուն
Ել չի հոսել զեպի ձոր:

Մամուկալել են բարակ
Ճամբաները քարայրի,
Յեվ աճել են ժայռի տակ
Փշոտ վարդերը վայրի:

Բայց ամայի այդ ձորից
Կաքավն ել չի հեռացել,
Ու վողջ ձորն ել այդ որից
«Կաքավաձոր» ե կոչվել:

Ու վայրենի այդ ձորում
Կային անթիվ կաքավներ,
Վոր բուն դրած թփերում
Յերգում եյին մինչ գիշեր:

Վոչ մի վորսորդ չեր դիպչում
Նրանց նախշուն փետուրին,



Ամեն մի մարդ գիտեր, Վոր
Սուրբ ե կաքավն այդ ձորի:

Բայց գառնարած Աթոյին
Ո՞վ կարող եր խոսք ասել,
Սիրում եր նա քարերով
Լոր ու կաքավ հալածել:

Նա ուլիկի պես առույգ
Մազկցում եր ժայռնիվեր
Ու կիսամուկ քարայրում
Սպասում եր անհամբեր:

Ու յերբ կաքավը նախշուն
Վար եր իջնում ժեռ քարին,
Քար եր նետում ու փախչում
Իմ ընկերը քաջարի:

— Աթո՛, Աթո՛, ցած արի,
Աթո ձեռքիդ քարը թո՛ղ,
Սուրբ ե կաքավն այդ ձորի,
Սուրբն ել չար ե, տուն քանդող:

Կանչում եյի, աղերսում,
Ձեռքս մեկնում դեպի վեր,
Բայց Աթոն ինձ չեր լսում,
Քար եր նետում անտարբեր:

Այսպես մի որ, յերբ կրկին
Նա քար նետեց ձորով ցած,
Յերկու ժայռի արանքին
Մի խեղճ կաքավ թփրտաց:

Մենք յերկուսս ել ճշարով
Կաքավի մոտ սլացանք,
Վոր մահվան դեմ կովերով
Թփրտում եր քարի տակ:

Ջուր ցանեցինք մենք սիրով
Նրա սիրուն գլխիկին,
Ու մեր քնքուշ խնամքով
Ուշքի յեկավ նա կրկին:

Պայծառ որը ամառվա
Արդեն կեսոր եր դառնում,
Արդեն անչափ սիրելի
Բերի*) ժամն եր մոտենում:

Հավաքեցինք յերկուսով
Մեր գառներին կշտացած,
Ու բարձրաձայն յերգելով
Բերատեղին մոտեցանք:

*) Բեր — վոչխարի կեսորյա կիթ:

Յերբ վոր հասանք բերատեղ,
Յերբ գառ ու մայր միացան,
Յես կանգնեցի մի քարի
Ու կանչեցի բարձրաձայն.—

— Հե՛յ, հե՛յ, ասի, հովիվներ,
Գառնարածներ, լսեցեք,
Սուրբ քարայրից մեր Աթոն
Մի կաքավ ե վորսացել:

Այս վոր լսեց մի ծեր կին,
Վրա վազեց ճշալով,
Ու ճիպոտով իր ձեռքի
Մի լավ ծեծեց Աթոյին.

Հետո բռնեց իմ մազից
Ու ձիգ տվեց զույգ ձեռով,
Թե՛ «վոչ հասնես մուրազիդ,
Բախտը մնա քեզ խռով.

Ո՛վ եր տեսել եսպես ցավ,
Եսպես կրակ ու զուլում,
Մարդ ել բռնի սրբի հավ,
Լսե՞լ եյիք ձեր որում...»

Կաքավն առան մեր ձեռքից
Բաց թողեցին ու գնաց.

Ու մնացինք կողք-կողքի
Յես ու Աթոն շվարած:

Մայրն ել յեկավ Աթոյի,
Նա ել ծեծեց իր վորդուն,
Ու ձեռներից բռնելով
Քաշեց տարավ իրենց տուն...

Այնուհետև այդ որից
Յես չտեսա Աթոյին
Ու չիմացա թե նրան
Ինչ արեցին, ուր տարան:

Ու յերբ ամեն առավոտ
Գառնարածները գյուղի
Քշում եյին դեպ արոտ
Աշխույժ հոտը գառների:

Հիշում եյի յես նորից
Ընկերոջն իմ գառնարած,
Հարցնում եյի իմ մորից,
— Մայրիկ, Աթոն ո՞ւր գնաց...

— «Գուցե հեռու մի քաղաք,
Կամ այլ մի գյուղ գառնարած,
Վոր քարի հետ չխաղա
Ու խելացի մարդ դառնա...»

Այսպես ասաց մի անգամ
Իմ մայրիկը բարեսիրտ,
Հետո ել թե՛ «ո՛վ աստված,
Քո դուռը բաց ու լսիր:

Անմեղ ե իմ յերեխեն,
Նա չի բռնել քո հավին,
Նա հանցավոր չի յեղել,
Դու ազատիր մեզ ցավից ...»

Անցավ այսպես մի տաս տարի,
Ու տասն անգամ ձմեռ տեսանք,
Պակսեց բերքը մեր արտերի,
Կյանքը դարձավ սով ու տանջանք:

Խմբապետներ մեջտեղ յեկան,
Չար ու անխիղճ կողոպտիչներ,
Խլեցին մեր կոմի ու կթան,
Յեվ այրեցին գյուղերը մեր:

Ու ժողովուրդն աղքատ ու խեղճ,
Չտանելով տանջանք ու ծեծ,
Դաշնակցական կարգերի դեմ
Զենքը ձեռին ապստամբվեց:

Ու մեր յերկրում՝ ահեղաձայն
Թնդանոթներ վորոտացին,

Թնդանոթով կռվի յեկան
Մեր բանվորներն ու գյուղացին:

Նրանք յերկրից դուրս վանեցին,
Մեր թշնամի դաշնակներին,
Ու վողջ յերկրում հաստատեցին,
Պետությունը խորհուրդներին:

Ու ավերակ մեր գյուղերում,
Լայն դաշտերում, արոտներում,
Հնչեց յերգը ուրախ կյանքի,
Յերգը խաղաղ աշխատանքի:

Կանաչ հազան արոտ ու դաշտ,
Ու բազմացան նախիր ու հոտ,
Մանուկներն ել ուրախ զվարթ
Գառնուկներին տալան արոտ:

Ու մի որ ել հեռու սարից
Յերբ վոր ծագեց արևը հուր,
Հավաքվեցինք մենք վողջ գյուղով
Ու գնացինք Կաքավաձոր:

Ասում եյին, վոր այդ ձորում
Ու մեր գյուղի վողջ սարերում,
Գիտունները մեր նոր յերկրի
Հանք են գտել տուֆաքարի:

Ու մարդիկ են յեկել ահա,
Վոր քլունգով զինամիտով,
Մեր նորաշեն յերկրի համար
Բաց անեն այդ հանքերը ծով:

Յերբ վոր հասանք Կաքավաձոր,
Տեսանք մի խումբ նորեկ մարդկանց,
Վոր քաջաբար ճեղքում էյին
Քարավները մամռակալած:

Նրանց խմբում կար մի տղա,
Վոր բաժանվեց ընկերներին,
Դինամիտ ու պատրույգ առած
Գնաց հասավ մութ քարայրին:

Հետո լավեց մի խուլ թնդյուն,
Մի պահ մթնեց որն ամառվա,
Ու պար յեկավ կապույտ ողու
Այդ քարայրը սուրբ համարված:

Ու յերբ յեկավ քարն հուրհուրան,
Յերբ պայթյունի ձայնը լռեց,
Տղան կանգնեց ժայռի վրա
Ու ժպտալով մեզ ձայն տվեց.—

—Այ գյուղացիք, ինչ եք նայում
Այդպես մոլոր ու զարմացած,

Մի մոտ յեկեք, բա չե՞ք հիշում
Յես Աթոն եմ ձեր գառնարած:

Այս վոր ասաց, ժայռի թևից
Ներքև թռանք մենք խնդալով,
Ու չորս կողմից վրա տվինք
Բարով յեկար Աթո, բարով:

—Վո՞րտեղ էյիր այսքան տարի,
—Վո՞նց յեղավ, վոր դարձար յեկար...
Նա ծիծաղեց,—եհ, ի՞նչ ասեմ,
Պատմությունն իմ շատ է յերկար:

Ինչպես գիտեք, այս սարերում
Յես գառ էյի արածացնում.
Ու մի որ ել թռչնի համար
Ինձ ծեծեցին խիստ չարաչար:

Շատ հուզվեցի յես այդ գեպքից,
Վարմունքից այդ չար ու դաժան,
Խռովեցի իմ հոր տանից
Ու գնացի դարձա խուժան:

Ապրում էյի խեղճ ու տկուր,
Վտտաբորիկ ու կիսաքաղց,
Չարչարվելով գիշեր ու գոր
Չեյի ճարում մի կտոր հաց:

Յես ունեյի շատ ընկերներ
 Ինձպես անտեր, մերկ ու անտուն,
 Ապրում եյինք՝ վոնց պատահեր,
 Դեհ, որն ինչ է խուժան մարդու:

Մենք շատ տխուր որեր տեսանք,
 Շատ տանջվեցինք սովի ձեռին,
 Մինչև ծագեց մեր աշխարհում
 Արեգակը խորհրդային:


Այնուհետև հավաքեցին
 Մեզ բոլորիս մի մանկատուն,
 Նոր հազուստներ հազցրեցին,
 Տվին ուսում ու կրթություն:

Ամեն մանուկ մի բան ընտրեց
 Ու սովորեց՝ ով ինչ կուզեր,
 Յես ել ահա վորոշեցի
 Դառնալ խելոք մի ինժեներ:

Յերբ կրթություն առա արդեն
 Ու դուրս յեկա յես ինժեներ,
 Խնդրեցի, վոր ինձ ուղարկեն
 Հայրենական լեռները մեր:

Գիտեյի, վոր մեր լեռներում
 Շատ հանքեր կան տուֆաքարի,

Գիտեյի, վոր քարայրն ել այս
 Կազմված է հենց այդ քարից:



1625
38

Վորոշեցի յես իմ ձեռքով
 Քանդել հիմքից այս քարայրը

Ու դուրս բերել արևի տակ
Մեր լեռների տուֆաքարը:

Եւ ի՞նչ ասեմ, այ գլուղացիք,
Դուք բոլորդ եւ արդեն տեսաք,—
Սուրբ քարայրը մենք քանդեցինք,
Վոր մեր՝ յերկրին տուֆաքար տանք:

Կառուցում ենք մենք ամեն տեղ
Նոր քաղաքներ ու գյուղեր նոր,
Ով չգիտի, վոր մեր յերկրին
Քար հանքեր շատ են հարկավոր:

Հիմա հեռու լեռներում մեր,
Ալագյազի սեզ լանջերին,
Վորոտում են որ ու գիշեր
Լի հանքերը տուֆաքարի:

Գար են տալիս մեր շենքերին
Հարյուրավոր քաջ բանվորներ,
Աշխատում ե նրանց կողքին
Սթին եւ ժիր մի ինժեներ:

Ու վոչվոքի ել չեն ծեծում
Սուտ ու հիմար սրբի համար,
Ուրախ-զվարթ են մեծանում
Փոքրիկները խելոք ու չար:

Ծնողներն այդ մանուկները —
Աշխատում են տուֆի հանքում,
Ինձ՝ փոքրերն այդ չարածնի
Դպրոցներում են սովորում:

Մտփրտում են վեր մեծանան
Դառնան տեխնիկ ու ինժեներ,
Դառնան վարպետ, զառնան բանվոր
Ու կառուցեն նոր քաղաքներ:



04

Պատ. խմբագիր՝ Գ. Սարգսյան
Տեխ. խմբ. Ան. Գառնապետյան
Սրբագրիչ՝ Թ. Հովհաննիսյան

Գլավիտի լիազոր Կ—4651 Հրատ. 4191.

Պատվեր 1194. Տիբաժ 5000.

Թուղթ 74×110. Տպագր. 0,6 մամուլ.

Մեկ մամ. 30720 նիշ. Հեղինակային $1\frac{1}{2}$ մամ.

Հանձնված և արտադրության 14 հոկտեմբերի 1937

Ստորագրված և տպագրության 8 դեկտեմբերի 1937

Գինը 25 կոպ.

Պետհրատի տպարան, Յերեան, Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0396152

ԳԻՆԵ 75 ԿՈՊ.

6596



ԱԳԱՎՈՒՆ
ԿԱԿԱՎԱԴՅՈՐ
ԴԻՆ ԱՐՄ. ՍՍՐ. ԵՐԵՎԱՆ